«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ». ԿԱՀԻՐԵԻ VI ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Ս. թ. հոկտեմբերի 18–19-ը Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Կահիրեի համալսարանում տեղի ունեցավ «Հայագիտությունն արաբական աշխարհում» խորագրով գիտաժողով, որի կազմակերպիչը Կահիրեի համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայագիտության կենտրոնն էր: Գիտաժողովի աշխատանքները վարում էին Եգիպտոսի առաջատար գիտնականներ՝ պատմաբաններ, բանասերներ, լեզվաբաններ և մշակութաբաններ: Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ Եգիպտոսից, Հայաստանից, Լիբանանից ու Միացյալ Թագավորությունից: Բացման նիստում ելույթ ունեցավ Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, արաբագետ Արմեն Մելքոնյանը*, ով էականորեն կարևորեց Կահիրեի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի նշանակությունը: Գիտաժողովին մասնակցում էր նաև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ* Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը*, փոխառաջնորդ* Տ. Գաբրիել վարդապետ Սարգսյանը*, նաև Եգիպտոսի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ* Գրիգոր եպիսկոպոս Գուսան*:*

Գիտաժողովի մասնակիցներն անդրադարձան հայ-արաբական պատմական ու պատմամշակութային փոխառնչություններին լայն սպեկտրով՝ սկսած միջնադարից մինչև նորագույն շրջան: Շեշտադրվեց հայերի դերակատարությունը Եգիպտոսի քաղաքական, ռազմական, հասարակական, տնտեսական ու մշակութային ոլորտներում՝ սկսած ֆաթիմյան շրջանից մինչև նոր և նորագույն շրջաններ: Վերստին հիշատակվեց Մուհամմեդ Ալիի կառավարման շրջանում Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար փաշայի (Նուբար Նուբարյան) և հայ նախարարների անունները:

Հայաստանից գիտաժողովին մասնակցում էին և ելույթ ունեցան՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջա-

տար գիտաշխատող, բ. գ. դ., ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Վերժինե Սվազլյանը *(թեման՝ «Իսլամ արաբների մարդասիրական վերաբերմունքը Հայոց ցեղասպանությունից մազապուրծ քրիստոնյա արևմտահայությանը»), ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի վարիչ, բ. գ. թ.* Սոնա Տոնիկյանը *(թեման՝ «Սուրբ Ղուրանի հայերեն թարգմանությունները»), արևելագետ, բ. գ. թ.* Արման Հակոբյանը *(թեման՝ «Հայկական Քարշունին»), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.* Արաքս Փաշայանը *(թեման՝ «Նահդան և հայերի մասնակցությունը. Ադիբ Իսհակի օրինակով»), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ.* Քնարիկ Ավագյանը *(թեման՝ «Հայերը Եգիպտոսում (սկզբից մինչև 1922 թ.»), պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.* Նարինե Երանոսյանը *(թեման՝ «Արևմտահայության 1894–1896 թթ. կոտորածների արձագանքները Եգիպտոսի արաբալեզու մամուլում») և արաբագետ, Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի շրջանավարտ* Էսթեր Պետրոսյանը *(թեման՝ «Մի եռալեզու Քարշունի ձեռագրի շուրջ»):*

Բավական արժեքավոր էր լիբանանցի հայագետ, Հայաստանի պատմության տարբեր հարցերին նվիրված բազմաթիվ գրքերի հեղինակ Սալեհ Զահրեդդինի *ակտիվ մասնակցությունը և զեկուցումը, որը կրում էր «Հայ-իսլամական փաստաթղթերի նշանակությունը հայ-արաբական համագործակցության ամրապնդման հարցում» վերնագիրը: Նշենք, որ նա իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, և արաբական աշխարհի ամենահայտնի հայագետներից է:*

Արաբ հետազոտողներից մեկի՝ դոկտոր-պրոֆ. Մահմուդ Ալավիի *զեկուցումը վերնագրված էր՝ «Նիկոլայ Հովհաննիսյանը՝ գիտնական», որում ներկայացված էին ճանաչված արևելագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննսիյանի արաբագիտական հիմնական աշխատանքները: Լիբանանցի հետազոտող դր.* Զեյնա Տֆալիի *զեկուցումը նվիրված էր սիրիացի հայագետ, թարգմանիչ Նիզար Խալիլիին, դր.* Ֆեհր Շաքերի *զեկուցումը՝ Հայաստանում արաբական ձեռագրերին, դր.* Նուրա Աբդել Ազիմ Օսմանի *զեկուցումը՝ Ֆաթիմյան Եգիպտոսում հայերի ներդրմա-*

նը, Սամեհ Ալ-Գարիիի *զեկուցումը՝ հայկական ծագում ունեցող իրանցի հայտնի լուսավորչական գործիչ Միրզա Մալքամ Խանին (1833–1908), դր.* Գամալ Քամալի *զեկուցումը՝ Ժամանակակից Եգիպտոսում հայկական արհեստներին ու արվեստագետներին: Մնացած զեկուցումները ևս աչքի էին ընկնում գիտական բարձր մակարդակով:*

Նշենք, որ Կահիրեի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հիմնվել է 2007 թ.: Սա այն բացառիկ հայագիտական կենտրոններից է, որը, ի դեպ, ստեղծվել է Եգիպտոսի վարչապետի հրամանով: Կահիրեի համալսարանը Միջին Արևելքի ու Աֆրիկայի ամենախոշոր և մեծ հեղինակություն վայելող գիտակրթական հաստատություններից մեկն է, որտեղ սովորում է մոտ 250.000 ուսանող: Մինչ օրս Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը կազմակերպել է վեց միջազգային գիտաժողով: Կենտրոնն ունի հայերեն լեզվի ուսուցման ծրագիր, իրականացնում է հայագիտական ուսումնասիրությունների հրատարակություններ, կազմակերպում գիտական քննարկումներ և այլն: Կենտրոնի գործունեությունը հովանավորվում է Ազգային առաջնորդարանի կողմից և գտնվում Եգիպտոսում ՀՀ դեսպանության ու հայ ազգային կառույցների, այդ թվում՝ Հ.Բ.Ը.Մ. Եգիպտոսի մասնաճյուղի ուշադրության կենտրոնում:

Կասկածից վեր է, որ Կահիրեի գիտաժողովը կարևոր ներդրում է արաբական հայագիտության մեջ, որի առաջ ծառացած են ոչ քիչ խնդիրներ:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ